

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՒԱԿԱՑ

(«Արարատ» օրաթերթի խնդրանքով)

Սիրով ընդառաջում ենք Պէյրութ հրատարակուող «Արարատ» օրաթերթի յարգարժան խմբագրութեան դիմումին և սոյն Մեր գրով Ամենայն Հայոց քրիստոնէական բազմադարեան կենտրոն Սուրբ Էջմիածնից յղում ենք Մեր հայրական ողջոյնը և օրհնութիւնը Լիբանանի համայն հայ հաւատացեալ ժողովրդին, մաղթանքով ջերմագին, որ Տիրոջ ողորմութեամբ այնտեղ վերջ գտնի տիրող տագնապալի կացութիւնը և մօտ ապագայում տարբգրական այդ երկիրը վերագտնի իր երբեմնի խաղաղ ու բարգաւաճ վիճակը, համերաշխ եղբայրական գործակցութեամբը մահմեդական ու քրիստոնեայ համայնքների:

Մենք խղճի պարտք ենք համարում յատկապէս Մեր խօսքը ուղղելու Լիբանանի Հայ Եկեղեցու պաւակներին, հայրաբար յորդորելով, որ նրանք շարունակեն բանիւ և գործով համերաշխութեան մղիչ ուժ հանդիսանալու համայնքների միջև, միշտ բարձր պահելով լիբանանեան հայրենասիրութեան դրօշը, միշտ հաւատարիմ ու անբաժան քաղաքացիները մնալով իրենց բարեխնամ երկրի: Համայն հայ ափիւռքի տարածքի վրայ պանդուխտ հայի համար չկայ այլ երկիր, որ նոյնքան ցանկալի լինի ինչքան լիբանանեան հայ-

րենիքը: Այդ հիւրընկալ բարի հողի վրայ հայութիւնը պարտաւոր է ամուր ու անշարժ մնալ, իր երջանկութիւնը նկատելով Լիբանանի խաղաղութիւնն ու բարօրութիւնը:

Ի տես մեր օրերի տագնապալի կացութեանց Լիբանանում և այլ բազում երկրներում, Մենք մշտապէս հանդես ենք եկել խաղաղութեան և ազգութիւնների միջև համերաշխութեան կոչերով, այն հաստատ համոզմամբ, որ մարդկութիւնը յետ այտու ապրելու, գոյատևելու մի փրկարար ճանապարհ ունի՝ այն է, ամէն տեսակի պատերազմների ընդմիշտ դադարումը, սպառազինութեանց արգելակումը և իրականացումը ընդհանուր կինաթափման:

Այս է մեր օրերի գերագոյն հրամայականը:

Հարազատ զաւակներ հայոց մայր Եկեղեցու որ ի Լիբանան, ձեր աղօթքի Տաճարներում, ձեր հաւաքատեղիներում ու ձեր տներում մշտապէս աղօթեցէք, որ Աստուած խաղաղութեան օգնութեան հասնի ձեզ՝ լիբանանցիներիդ և համայն մարդկութեան, որպէսզի խորտակուեն ամէն տեսակի մարդասպան զէնքերը և արդարութեան արեգակը շողայ խաղաղուած մի աշխարհի վրայ, զի ամէն պատերազմ, ուր էլ որ սանձազերծուի սպառնալիք է բոլոր ազգութիւնների համար:

Աւելի լոյս, աւելի իմաստութիւն ու վերջնական խաղաղութիւն տառապող մայր Լիբանանին:

Աւելի լոյս, աւելի իմաստութիւն ու վերջնական խաղաղութիւն համայն մարդկութեան:

Մենք և համայն ձեր հաւատացեալ եղբայրները ի Սովետական Հայաստան, մշտապէս աղօթում ենք ձեզ համար, վիրաւոր Լիբանանի համար, մեր օրերի աշխարհի խաղաղութեան համար:

«Ոչ դադարեմ ի գոհանալով վասն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս. Զի Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայրն փառաց՝ տացէ ձեզ զհոգին իմաստութեան և յայտնութեան՝ գիտութեամբն իւրով» (Եփես. Ա 16—18): Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
14 նոյեմբերի 1986 թ.

Академия наук Армянской ССР
Фундаментальная библ.